ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2020 թվականի N 91

ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N 15-Ն հրամանով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. 2020 թվականի դեկտեմբերի 25-ին՝ ժամը 11^{00}-ին, անցկացնել Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր՝ 1.2-1) ատեստավորում:
2. Ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղար Արմինե Զաքարյանի (ծածկագիր՝ 1.2-1) վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 թվականի նոյեմբերի 20

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2020 թվականի N 92

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի N 13-Ն որոշման պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Կազմակերպել Նոր Արտամետ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի նախագծի քննարկման հանրային բաց լսումներ:
2. Հաստատել Նոր Արտամետ համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Աշխատակազմի քարտուղար Արմինե Զաքարյանին՝ համայնքապետարանի ինտերնետային կայքում տեղադրել համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը, բյուջեի նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղար Արմինե Զաքարյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 20

գ. Նոր Արտամետ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի
N 92 ՈՐՈՇՄԱՆ

ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀՐԱՎԵՐ

2020 թվականի դեկտեմբերի 8-ին՝ ժամը 11:00-ին, Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքապետարանում (1-ին փողոց N 107 հասցեում) տեղի կունենա Նոր Արտամետ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի նախագծի քննարկման հանրային բաց լսում:

Համայնքապետարանը հրավիրում է համայնքի բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու նախագծի քննարկմանը:

Ձեր առաջարկություններն ու դիտողությունները կարող եք ուղարկել norartamet.kotayq@mta.gov.am էլեկտրոնային հասցեով կամ ներկայացնել Նոր Արտամետի համայնքապետարան ոչ ուշ, քան ս/թ դեկտեմբերի 3-ը:

Նոր Արտամետ համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծին կարող եք ծանոթանալ nor-artamet-kotayk.am ինտերնետային կայքում՝ հայտարարությունների բաժնում: